Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի «Ռուսաց լեզու», <<Երկխոսությունների և տեքստերի կազմում երկրորդ օտար լեզվով>>, <<Հաղորդակցման տարրական կարողություններ երկրորդ օտար լեզվով>> (0,8 դրույք՝ 578 ժամ), <<Անալիտիկ երկրաչափության տարրեր>>, <<Մաթեմատիկական անալիզի տարրեր >>, << Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառությունները>> (0,5 դրույք՝ 360 ժամ) առարկաների և մոդուլների դասախոսների թափուր աշխատատեղերի համար

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որոնք նույնպես առնչվում է առաջադրանքին:

Հաստատության տվյալ թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Հաստատության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված

այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Փատաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի պետական համալսարանի ընդհանուր բաժին, հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36:

Մրցույթները տեղի կունենան 2024թ սեպտեմբերի 11-ին 14:00-ին (<<Անալիտիկ երկրաչափության տարրեր>>, <<Մաթեմատիկական անալիզի տարրեր>>, <<Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառությունները>> և 15:00-ին («Ռուսաց լեզու», «Երկխոսությունների և տեքստերի կազմում երկրորդ օտար լեզվով», «Հաղորդակցման տարրական կարողություններ երկրորդ օտար լեզվով») ՀՀ Լոռու մարզի Վանաձորի պետական համալսարանում, հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36:

Տեղեկությունների համար զանգահարել /1-49/, (0322) 4-18-56 հեռախոսահամարներով: